«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ 1-ԻՆ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ

ԿԱՆՈՆՆԵՐ

Երևան, 2026 թվական

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դատախաղ-մրցույթի կանոնները

1.1 Սույն կանոնները **(«Կանոններ»)** սահմանում են «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**» ուսանողական դատախաղ-մրցույթի **(«Մրցույթ»)** կազմակերպման և անցկացման կարգը, մասնակցության պայմանները, Մրցույթի գրավոր և բանավոր փուլերի կանոնները, մասնակիցների, մարզիչների, դատավորների և կազմակերպիչների իրավունքներն ու պարտականությունները, գնահատման չափանիշները, պատասխանատվության միջոցները, ինչպես նաև Մրցույթի արդյունքների որոշման ընթացակարգերը:

1.2 Մրցույթում քննության առարկա է դառնալու հորինված դատական գործ, որի շրջանակում դատախազը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց է ներկայացնում դատարան:

2. Մրցույթի անվանումը

2.1 Մրցույթի պաշտոնական անվանումն է՝ **«Հայաստանի պետական շահերի պաշտպանություն»** ուսանողական դատախաղ-մրցույթ:

2.2 Մրցույթի անգլերեն անվանումը կարող է սահմանվել որպես **Student Moot Court Competition on the Protection of the State Interests of the Republic of Armenia**:

2.3 Մրցույթի տարբերանշանը, կարգախոսը, գրաֆիկական ինքնությունը և հաղորդակցության այլ տարրերը հաստատում են կազմակերպիչները:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Մրցույթի կազմակերպիչները և նպատակները

3.1 Մրցույթի կազմակերպիչներն են **ՀՀ դատախազությունը, Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտը և ԵՊՀ իրավաբանական լաբորատորիան (այսուհետ միասին՝ «Կազմակերպիչ»)**:

3.2 Գործընկերների ներգրավումը Մրցույթում չի կարող սահմանափակել կազմակերպչական մարմինների անկախությունը, դատավորների անաչառությունը կամ թիմերի իրավահավասարությունը:

3.3 Մրցույթի նպատակներն են՝

1) ուսանողների՝ իրավական հետազոտություն կատարելու, իրավական խնդիրներ բացահայտելու և լուծումներ մշակելու կարողությունների զարգացումը,
2) պետական (համայնքային) շահերի պաշտպանության ոլորտում Դատախազության լիազորությունների վերաբերյալ ուսանողների գիտելիքների խորացումը,
3) գրավոր և բանավոր իրավական փաստարկման, դատական ներկայացուցչության և դատավարական հաղորդակցության հմտությունների զարգացումը,

4) ուսանողների շրջանում բարեվարքության, մասնագիտական էթիկայի և արդար մրցակցության մշակույթի ձևավորումը,
5) Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ակադեմիական և մասնագիտական համագործակցության խթանումը,
6) լավագույն ուսանողների բացահայտումը և նրանց մասնագիտական զարգացմանը նպաստելը:

4. Մրցույթը

4.1 Մրցույթը բաղկացած է երկու փուլերից՝ **գրավոր և բանավոր**:

4.2 Մրցույթի աշխատանքային լեզուն հայերենն է: Մրցույթի խնդիրը, պարզաբանումները, գրավոր դիրքորոշումները և բանավոր ելույթները ներկայացվում են հայերեն:

4.3 Օտարալեզու իրավական աղբյուրների օգտագործումը թույլատրվում է: Օտարալեզու աղբյուրից մեջբերում կատարելու դեպքում թիմը պետք է ներկայացնի դրա հայերեն թարգմանությունը՝ պահպանելով հղումը սկզբնաղբյուրին: Թարգմանության ճշգրտության համար պատասխանատվություն է կրում այն ներկայացրած թիմը:

5. Մրցույթի խնդիրը (դատական գործը)

5.1 Մրցույթի խնդիրը հիմնված է Դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցի հարուցման արդյունքում ծագած իրավական վեճի վրա: Գործի մանրամասները տեղայնացվել են Մրցույթի համար: Վեճի մասնակիցների անունները, ինչպես նաև այլ մանրամասները պայմանական են:

5.2 Մասնակիցները կարող են դիմել կազմակերպչին՝ խնդրի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կամ ուղղումներ իրականացնելու խնդրանքով՝ **մինչև պաշտոնական ժամանակացույցում նշված ամսաթիվը:** Պարզաբանումներ կատարելու դիմում-խնդրանքը պետք է պարունակի խնդրի էջի համարը, որտեղ հայտնաբերվել է անճշտությունը, վերաբերի այնպիսի փաստական հանգամանքներին, որոնք էական նշանակություն ունեն խնդրի համար:

5.3 Վերոգրյալ դիմումների հիման վրա Կազմակերպիչը կարող է հրապարակել համապատասխան պարզաբանումներ, լրացումներ և ուղղումներ **ՀՀ դատախազության կայքում՝ ԵՊՀ իրավաբանական լաբորատորիայի բաժնում,** որոնք հանդիսանալու են խնդրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

6. Թիմերը և Մրցույթին գրանցվելու կարգը

6.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության բուհերի իրավաբանական ֆակուլտետների 3-րդ, 4-րդ կուրսերի ուսանողները, ինչպես նաև մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները, իրավաբանական ուղղություն ունեցող հաստատությունների ուսանողները:

6.2 Յուրաքանչյուր հաստատությունից մասնակցության հայտ կարող են ներկայացնել **առավելագույնը 4 թիմեր:** Նույն բուհի տարբեր թիմերը Մրցույթի ընթացքում համարվում են միմյանցից անկախ թիմեր և չեն կարող փոխանակել ներքին կամ սահմանափակ հասանելիությամբ նյութեր:

6.3. Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ **նվազագույնը 2** և **առավելագույնը 5 անդամ**: Թիմի անդամներից **առնվազն երկուսը** պետք է հանդես գան որպես բանախոս: Թիմը կարող է բանավոր մրցափուլի տարբեր փուլերում փոխել բանախոսների կազմը: Թիմի անդամը չի կարող նույն մրցութային տարում ընդգրկվել մեկից ավելի թիմերի կազմում: Թիմի անդամը դատախաղին մասնակցության հայտ ներկայացնելու պահին չի կարող զբաղեցնել դատավորի, դատախազի պաշտոն կամ լինել փաստաբան:

6.4 Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մարզիչ, սակայն մարզչի առկայությունը պարտադիր պայման չէ: Մարզիչը կարող է միայն ուղղորդել թիմերին՝ պատրաստվելու մրցույթի գրավոր և բանավոր փուլերին: Մասնավորապես, նա կարող է մրցույթի մասնակիցներին ծանոթացնել դատախաղի կանոններին և հիմնական սկզբունքներին, հետազոտություն կատարելու մեթոդներին, օգնել իրավական հարցերը բացահայտելու հարցում, մեկնաբանություններ ներկայացնել գրավոր աշխատանքների նախագծերում ձևակերպված փաստարկների համոզչության վերաբերյալ և, անհրաժեշտության դեպքում, առաջարկել այլ փաստարկներ, որոնք թիմը կարող է դիտարկել: Միաժամանակ, մարզիչը իրավունք չունի կազմել գրավոր աշխատանքները մասնակիցների, թիմերի փոխարեն, գրավոր աշխատանքի վերջնական տարբերակը պետք է լինի բացառապես թիմի անդամների ինքնուրույն աշխատանքի արդյունքը և չպետք է փաստացի կազմված կամ վերաշարադրված լինի մարզիչների կամ այլ անձանց կողմից:

6.5 Բանավոր փուլին նախապատրաստվելու ընթացքում թիմի կողմից ստացվող մարզչական կամ խորհրդատվական աջակցության ծավալի նկատմամբ սահմանափակում չի կիրառվում: Խրախուսվում և ակնկալվում է, որ թիմերը կանցկացնեն փորձնական բանավոր ելույթներ և դատախաղեր թիմի այլ անդամների հետ:

6.6 Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա ավագ, որը հանդիսանում է թիմի մասնակիցներից մեկը և որի միջոցով Կազմակերպիչը կապ է հաստատում թիմի հետ:

6.7 Մրցույթին մասնակցելու համար պետք է Կազմակերպչի կողմից սահմանված ժամկետում ներկայացնել **մասնակցության հայտ,** որը տեղադրված է **ՀՀ դատախազության կայքում՝** **ԵՊՀ իրավաբանական լաբորատորիայի բաժնում:**

6.8 Թիմի անդամները կարող են ներկայացվել տվյալ հաստատության իրավասու մարմնի (օրինակ՝ ֆակուլտետի դեկանի) կողմից, կամ հենց իրենք՝ ուսանողները, կարող են կազմել թիմեր և մասնակցության հայտ ներկայացնել՝ ստանալով իրավասու մարմնի համաձայնությունը:

6.9 Մասնակցության հայտը ներկայացվում է բուհի իրավասու մարմնի ստորագրությամբ, կնիքով (առկայության դեպքում)՝ լուսապատճենված տարբերակով:

6.10 Պահանջվող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն **studentmoot@prosecutor.am** էլ. փոստին:
6.11 Մրցույթին գրանցվելը և մասնակցությունն անվճար է:

7. Մրցույթի ժամանակացույցը

7.1 Մրցույթի ժամանակացույցը հրապարակվում է մրցույթի պաշտոնական հայտարարության հետ կամ դրանից հետո ողջամիտ ժամկետում՝ **ՀՀ դատախազության կայքում, այդ թվում՝ ԵՊՀ իրավաբանական լաբորատորիայի բաժնում:** Ժամանակացույցը ներառում է առնվազն՝

1) գրանցման մեկնարկի և ավարտի ժամկետները,
2) Մրցույթի խնդրի հրապարակման օրը,
3) պարզաբանումների հարցերի ներկայացման վերջնաժամկետը,
4) պարզաբանումների հրապարակման օրը,
5) գրավոր դիրքորոշումների ներկայացման վերջնաժամկետը,
6) բանավոր փուլերի և արդյունքների ամփոփման օրերը:

7.3 Կազմակերպիչը կարող է փոփոխել ժամանակացույցը, եթե դա պայմանավորված է անհաղթահարելի ուժով, տեխնիկական խափանմամբ, անվտանգության նկատառումներով կամ այլ էական հանգամանքով:
7.4 Ժամանակացույցի փոփոխության մասին թիմերը տեղեկացվում են հնարավորինս շուտ և հավասար պայմաններով:

8. Հաղորդակցությունը

8.1 Մրցույթի պաշտոնական հաղորդակցությունն իրականացվում է մրցույթի պաշտոնական էլեկտրոնային փոստի, Դատախազության կայքի կամ Կազմակերպչի կողմից նախապես հայտարարված այլ հարթակի միջոցով:
8.2 Թիմը պարտավոր է գրանցման ժամանակ նշել առնվազն մեկ գործող էլեկտրոնային փոստի հասցե:
8.3 Պաշտոնական հասցեով ուղարկված հաղորդագրությունը համարվում է թիմին պատշաճ կերպով ծանուցված:
8.4 Առանձին թիմի տրամադրված կազմակերպչական կամ բովանդակային նշանակություն ունեցող տեղեկությունը, որը կարող է ազդել մրցակցության պայմանների վրա, տրամադրվում է նաև մյուս թիմերին:

9. Գաղտնիությունը և թիմերի նույնականացման կարգը

9.1 Թիմերը մրցափուլերին մասնակցում են **անանունության սկզբունքով:** Յուրաքանչյուր թիմին գրանցումից հետո Կազմակերպչի կողմից տրամադրվում է **հերթական համար,** որը կիրառվում է Մրցույթի բոլոր փուլերում՝ սկսած վիճակահանությունից մինչև արդյունքների պաշտոնական հրապարակումը:

9.2 Անանունության սկզբունքը ենթադրում է, որ Մրցույթի ընթացքում դատավորներին և մրցակից թիմերին չի բացահայտվում մասնակցող թիմի ներկայացրած համալսարանի անվանումը: Թիմի անդամների անունները կարող են օգտագործվել կազմակերպչական նպատակներով, սակայն դրանք չպետք է հնարավորություն տան դատավորներին նույնականացնելու թիմի համալսարանական պատկանելությունը:
9.3 Թիմի անդամները, մարզիչները և թիմի հետ առնչվող այլ անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ թիմի համալսարանը բացահայտող ցանկացած բանավոր, գրավոր կամ տեսողական տեղեկության տրամադրումից:
9.4 Սույն կետում նախատեսված կանոնի խախտումը հանգեցնում է թիմի անհապաղ որակազրկման:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԸ

10. Գրավոր աշխատանքը
10.1 Գրավոր փուլի շրջանակներում յուրաքանչյուր թիմ պետք է ներկայացնի **երկու գրավոր աշխատանք՝ Հայցվորի (Դատախազության) դիրքորոշում և Պատասխանողի դիրքորոշում**, որոնց PDF և MS Word տարբերակները պետք է ուղարկվեն **studentmoot@prosecutor.am** էլ. փոստին, մինչև պաշտոնական ժամանակացույցում նշված ամսաթիվը և ժամը:
10.2 Թիմերը կարող են վերահանձնել իրենց գրավոր աշխատանքը առանց տույժի ենթարկվելու մինչև գրավոր փուլի վերջնաժամկետի ավարտը:
10.3 Գրավոր դիրքորոշումները պետք է մշակվեն միմյանցից անկախ և արտացոլեն համապատասխան կողմի առավել հիմնավոր իրավական փաստարկները:
10.4 Գրավոր փուլի համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո՝ մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամը 12:00, թիմերը դեռևս կարող են ուղարկել իրենց աշխատանքները, սակայն, այս դեպքում վերջիններիս աշխատանքի վրա կիրառելի է տույժ՝ մինչև 5 միավորի չափով:

11. Գրավոր աշխատանքին ներկայացվող պահանջները.
11.1 Գրավոր աշխատանքը պետք է բաղկացած լինի.

1) տիտղոսաթերթից,
2) գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի շարադրումից,
3) յուրաքանչյուր պահանջը հիմնավորող փաստարկներից (օրենսդրության կիրառումը փաստերի նկատմամբ),
4) եզրակացությունից,
5) դատարանին ուղղված խնդրանքից,
6) օգտագործված գրականության ցանկից,
7) ակադեմիական բարեվարքության պահպանման և արհեստական բանականության օգտագործման վերաբերյալ հայտարարությունից:

11.2 Գրավոր աշխատանքը պետք է կազմված լինի.

1) A4 ստանդարտով և 4 կողմերից ունենա հավասար լուսանցքներ 2.0 սմ,
2) ոչ ավել, քան 15 էջի սահմաններում՝ ներառյալ տիտղոսաթերթն ու օգտագործված գրականության ցանկը (յուրաքանչյուր դիրքորոշում՝ Հայցվորի և Պատասխանողի),
3) GHEA GRAPALAT տառատեսակով, 12 տառաչափով,
4) Հաջորդական համարակալված էջերով,
5) հղումները և ծանոթագրությունները պետք է լինեն 10 տառաչափով, իսկ տեքստում կատարված մեջբերումները՝ շեղատառ (Italic),
6) 1.15 տողաբացվածքով՝ բացառությամբ տիտղոսաթերթի,
7) ծանոթագրությունները՝ միաբացվածքով (single-spaced), յուրաքանչյուր պարբերություն պետք է լինի համարակալված:

11.3 Նմուշային օրինակը ներկայացվելու է նաև **ՀՀ դատախազության կայքում՝ ԵՊՀ իրավաբանական լաբորատորիայի բաժնում:**

11.4 Հայցի և պատասխանի յուրաքանչյուր տիտղոսաթերթ պետք է պարունակի հետևյալը.

1) թիմի համարը՝ վերևի աջ անկյունում (տրվում է Կազմակերպչի կողմից),
2) նշում այն մասին, թե փաստաթուղթը հայց է, թե պատասխան,
3) գործի անվանումը (նշված է գործում),
4) գործում նշված կողմերի անվանումները (նշված է գործում),
5) ամիս, ամսաթիվ, տարեթիվ:

12. Գործի փաստերի շարադրումը և հիմնավորումները

12.1 Փաստերը շարադրելիս թիմերը պետք է սահմանափակվեն խնդրում առկա փաստերով և չփորձեն ավելացնել նոր, չապացուցված փաստեր կամ խեղաթյուրել դրանք: Խորհուրդ է տրվում փաստարկները և իրավական հիմնավորումները ներկայացնելիս օգտվել տարատեսակ աղբյուրներից, այդ թվում՝ գիտական հոդվածներից, դասագրքերից, դատական գործերից և այլն:

12.2 Գրավոր աշխատանքի մեջ օգտագործված աղբյուրներին հղում կատարելու համար պետք է օգտագործվեն ծանոթագրություններ (footnotes):

12.3 Գրավոր աշխատանքը պետք է լինի բացառապես մասնակցող թիմերի անդամների մտավոր գործունեության արդյունքը:

12.4 Երրորդ անձի ստեղծագործության ոչ իրավաչափ օգտագործումը առանց հղում կատարելու, համարվում է **գրագողություն (պլագիատ):** Գրագողություն հայտնաբերելու դեպքում կկիրառվի տույժ՝ 10-30 միավոր՝ կախված գրագողության ծավալից:

12.5 Գրավոր փուլի համար սահմանված կանոնները չպահպանելու համար կկիրառվի տույժ՝ մինչև 10 միավորի սահմաններում՝ կախված խախտման բնույթից և քանակից:

12.6 Գրավոր դիրքորոշման վրա կամ դրա մետատվյալներում չի կարող նշվել թիմի անդամների, մարզչի կամ բարձրագույն ուսումնական հաստատության ինքնությունը:

13. Խնդրի փաստական շրջանակը

13.1 Մրցույթի խնդրում և պաշտոնական պարզաբանումներում նշված փաստերը համարվում են գործի ամբողջական փաստական շրջանակը:

13.2 Թիմերը չեն կարող հորինել նոր փաստեր, փոփոխել խնդրում նշված փաստերը, փաստական հանգամանքը ներկայացնել որպես հաստատված, եթե այն չի բխում խնդրից կամ պարզաբանումներից:

13.3 Թիմը կարող է փաստերից կատարել ողջամիտ և տրամաբանական հետևություններ՝ հստակ նշելով, որ խոսքը հետևության, այլ ոչ թե հաստատված փաստի մասին է:

13.4 Խնդրում չկարգավորված իրավական հարցերի վերաբերյալ թիմերը կարող են վկայակոչել Հայաստանի Հանրապետության և, համապատասխան հիմնավորմամբ, իրավունքի այլ աղբյուրներ:

14. Իրավական աղբյուրների օգտագործումը

14.1 Թիմերը կարող են օգտագործել՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը,
2) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը,
3) օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը,
4) Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և այլ դատարանների դատական ակտերը,
5) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և միջազգային այլ դատական մարմինների ակտերը,
6) օտարերկրյա օրենսդրությունը և դատական պրակտիկան՝ համեմատական վերլուծության նպատակով,
7) իրավական դոկտրինը, գիտական աշխատությունները և մասնագիտական մեկնաբանությունները:

14.2 Օգտագործվող բոլոր աղբյուրները պետք է պատշաճ կերպով վկայակոչվեն:

14.3 Դատական ակտի վկայակոչումը պետք է հնարավորության դեպքում ներառի դատարանի անվանումը, գործի համարը, ակտի ամսաթիվը և համապատասխան պարբերությունը կամ էջը:

14.4 Առցանց աղբյուրի հղումը պետք է հնարավորություն տա նույնականացնելու նյութի հեղինակին, վերնագիրը, հրապարակման աղբյուրը և հասանելիության հասցեն:

14.5 Թիմը պատասխանատու է վկայակոչված աղբյուրների իսկության և բովանդակության ճշգրիտ ներկայացման համար:

15. Դատավորները

15.1 Գրավոր աշխատանքները և բանավոր փուլերը գնահատվում են թվով **3 (երեք) դատավորների** կողմից, որոնց ընտրում է Կազմակերպիչը:

15.2 Մրցույթի դատավորներ կարող են լինել դատախազները, փաստաբանները, իրավաբան-գիտնականները, իրավաբանները և դատավորները:

16. Էլեկտրոնային սարքերի և արհեստական բանականության գործիքների կիրառումը գրավոր փուլում

16.1 Հաշվի առնելով արհեստական բանականության լայն տարածվածությունն ու գործնական նշանակությունը՝ Մրցույթը դրա կիրառման կարգավորման հարցում որդեգրում է սկզբունքահեն մոտեցում:

16.2 Արհեստական բանականությունը կարող է օգտագործվել Մրցույթին գրավոր փուլում՝ առնչվող գործունեության ընթացքում՝ ուսանողի սեփական դատողությունն ու վերլուծությունը լրացնելու, **սակայն ոչ դրանք փոխարինելու նպատակով**: Այսպիսով, քննադատական մտածողությունը պետք է շարունակի մնալ գիտելիքների, դատողության, իրավաբանական պաշտպանության և ստեղծագործական մոտեցման դրսևորման հիմնական հիմքը:

16.3 Ըստ այդմ՝ ԱԲ գործիքների կիրառումը գրավոր փուլում կարող է թույլատրելի լինել, ի թիվս այլնի, հետևյալ նպատակներով.

1) թիմի ներքին վարչական և կազմակերպչական աշխատանքների իրականացման համար ԱԲ գործառույթներ պարունակող գործիքների օգտագործում,
2) վերաբերելի աղբյուրներ գտնելու նպատակով ԱԲ գործառույթներ պարունակող հետազոտական գործիքների օգտագործում, օրինակ՝ որոնողական համակարգեր կամ գրադարանային շտեմարաններ,
3) իրավական աղբյուրները թարգմանելու և դրանց բովանդակությունը հասկանալու նպատակով ԱԲ գործառույթներ պարունակող թարգմանական գործիքների օգտագործում,
4) ԱԲ գործիքների օգտագործում՝ ուսուցողական կամ խորհրդատվական աջակցության նպատակով,
5) վերաբերելի փաստական և իրավական թեմաների վերաբերյալ ընդհանուր բնույթի ամփոփ տեղեկանքներ կամ նախնական վերլուծություններ ստանալու նպատակով ԱԲ գործիքների օգտագործում, պայմանով, որ դրանք չեն ներկայացվում որպես գրավոր աշխատանքի մաս և օգտագործվում են բացառապես թիմի ներքին ըմբռնումը խորացնելու համար,
6) ԱԲ գործառույթներ պարունակող սրբագրման և լեզվական խմբագրման գործիքների օգտագործում:

17. Գրավոր փուլի գնահատման չափանիշները.

17.1 Մասնակիցների ներկայացրած գրավոր դիրքորոշումներից յուրաքանչյուրը դատավորները գնահատում են **100 միավորանոց** համակարգով՝ հետևյալ չափանիշներով.

1) Փաստական հանգամանքների և կիրառելի իրավունքի իմացություն և համադրում՝ 30 միավոր,

2) Իրավական հետազոտության խորություն և օգտագործված աղբյուրներ (այդ թվում՝ աղբյուրի վերաբերելիություն, աղբյուրների տեսակային բազմազանություն, աղբյուրների պատշաճ օգտագործում իրավական փաստարկի հիմնավորման համար, աղբյուրի գիտագործնական հեղինակություն)՝ 20 միավոր,
3) Պատշաճ իրավական վերլուծություն՝ 30 միավոր,
4) Կառուցվածք, կազմակերպվածություն և շարադրանքի հստակություն՝ 10 միավոր,
5) Իրավաբանական ոճ, լեզվական գրագիտություն և մասնագիտական ձևակերպումներ՝ 10 միավոր:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԸ

18. Մրցույթի բանավոր փուլի կառուցվածքը.

18.1 Բանավոր փուլը բաղկացած է հետևյալ ենթափուլերից՝

1) **նախընտրական,**
2) **կիսաեզրափակիչ,**
3) **եզրափակիչ:**

18.2 Բանավոր փուլին մասնակցում են միայն գրավոր աշխատանքներ ներկայացրած թիմերը:

18.3 Մրցող թիմերի զույգերը որոշվելու են վիճակահանության արդյունքում:

19. Նախընտրական փուլը.

19.1 Նախընտրական փուլում յուրաքանչյուր թիմ հանդես է գալիս երկու անգամ՝ Հայցվորի (Դատախազության) և Պատասխանողի անունից: Յուրաքանչյուր թիմ Հայցվորի և Պատասխանողի կարգավիճակներով պետք է հանդես գա տարբեր մրցակից թիմերի դեմ:

19.2 Նախընտրական բանավոր փուլում հավաքած միավորները հաշվի են առնվում **միայն Կիսաեզրափակչում մասնակցող թիմերին որոշելու նպատակով** և Կազմակերպչի կողմից սահմանված մրցանակների շնորհման համար:

20. Կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը.

20.1 Կիսաեզրափակիչ փուլ անցնում են Գրավոր, ինչպես նաև Բանավոր նախընտրական փուլերում ստացած միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ հավաքած **4 (չորս) թիմերը:**

20.2 Եզրափակչում կմրցեն Կիսաեզրափակիչ փուլում ստացած միավորների արդյունքով յուրաքանչյուր խմբից **հաղթած 2 (երկու) թիմերը**, որոնցից էլ կորոշվի Մրցույթի հաղթող թիմը՝ միայն բանավոր փուլի արդյունքներով:

20.3 Կիսաեզրափակչում և Եզրափակչում թիմերը մրցում են Մրցույթից դուրս գալու սկզբունքով: Այս փուլերում յուրաքանչյուր խաղի արդյունքում հաջորդ փուլ է անցնում կամ Մրցույթի հաղթող

է ճանաչվում բանավոր փուլի գնահատման արդյունքներով առավել բարձր միավորներ ստացած թիմը, իսկ պարտված թիմը դուրս է մնում Մրցույթից:

21. Բանավոր փուլի ժամանակացույցը.

21.1 Բանավոր փուլի Նախընտրական փուլը տեղի կունենա պաշտոնական ժամանակացույցով սահմանված առաջին օրը: Նախընտրական փուլի դատական նիստերի հստակ ժամանակացույցը կորոշվի վիճակահանությունից հետո:

21.2 Կիսաեզրափակիչ և Եզրափակիչ փուլերը տեղի կունենան պաշտոնական ժամանակացույցով սահմանված երկրորդ օրը:

22. Բանավոր փուլի ընթացակարգը

22.1 Մրցափուլը սկսվելու է Հայցվոր կողմի ելույթով, այնուհետև, իր դիրքորոշումն է ներկայացնելու Պատասխանող կողմը:

22.2 Յուրաքանչյուր թիմին հատկացվելու է առավելագույնը **30 (երեսուն) րոպե ժամանակ**՝ իր դիրքորոշումը ներկայացնելու, այն համապատասխան փաստարկներով հիմնավորելու և դատավորների հարցերին պատասխանելու համար: Թիմերը հատկացված ժամանակը տնօրինում են սեփական հայեցողությամբ՝ բաշխելով այն բանախոսների միջև:

22.3 Թիմերը պետք է բավարարվեն հատկացված ժամանակով, սակայն պատասխանն ամփոփելու կամ դատավորների հարցերին պատասխանելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ **առավելագույնը 1 անգամ կարող են օգտվել ելույթի ժամանակը մինչև 10 րոպեով երկարաձգելու իրավունքից**՝ համապատասխան խնդրանք ներկայացնելով տվյալ մրցափուլը նախագահող դատավորին:

22.4 Հարցին պատասխանող բանախոսը կարող է դիմել Նախագահող դատավորին՝ իր թիմակիցների հետ խորհրդակցելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Խնդրանքը բավարարվելու դեպքում այդպիսի խորհրդակցությունը պետք է իրականացվի 50 վայրկյանի ընթացքում:

22.5 Այնուհետև կողմերից յուրաքանչյուրին՝ նախ Հայցվորին, ապա Պատասխանողին, տրամադրվում է **5-ական րոպե՝** հակառակ կողմի ներկայացրած փաստարկներին արձագանքելու և հակափաստարկներ ներկայացնելու համար:

22.6 Մրցափուլը եզրափակվում է դատավորների ելույթով: Եզրափակման ժամանակ դատավորները կարող են խնդրել կողմերին արտահայտել վերջնական դիրքորոշումներ կամ հստակեցնել որոշ փաստարկներ: Դատավորները չեն կարող արտահայտել գործի ելքի վերաբերյալ իրենց դիրքորոշումը եզրափակիչ փուլի ժամանակ, քանի որ դա պետք է իրականացվի Դատարանի գրավոր որոշման տեսքով:

22.7 Բանավոր մրցափուլի համար սահմանված ընդհանուր ժամանակը, անկախ որևէ հանգամանքից, չի կարող գերազանցել 2 ժամ 30 րոպեն:

22.8 Բանավոր փուլի մրցափուլի ընթացակարգի աղյուսակը ներկայացված է սույն Կանոններին կից **Հավելվածում:**
22.9 Մրցափուլի ավարտից հետո կողմերը լքում են նիստերի դահլիճը, դատավորները խորհրդակցում են և հրավիրում կողմերին՝ ծանոթանալու դատավորների որոշմանը:
22.10 Բանավոր փուլի ընթացքում մասնակիցները պետք է դատավորներին դիմեն **«Հարգելի՛ դատարան»**, նախագահողին՝ **«Հարգելի՛ նախագահող դատավոր»** կամ պարզապես **պարոն/տիկին «ազգանուն»:** Ելույթի ժամանակ թիմի անդամները պետք է դիմեն միայն դատավորներին: Ցանկացած շփում հակառակորդ թիմի անդամների հետ արգելվում է՝ բացառությամբ նախագահող դատավորի թույլտվությամբ:
22.11 Քաջալերող անձանց հետ շփումը խստիվ արգելվում է: Նիստերի ժամանակ նրանք իրավունք չունեն որևէ ձևով հուշել կամ շփվել մասնակիցների հետ:
22.12 Մասնակիցները պետք է հարգանքով վերաբերվեն միմյանց հետ և պետք է դիմեն մյուս կողմին **«Հարգելի՛ հայցվոր», «Հարգելի՛ պատասխանող»:** Չի թույլատրվում ելույթի ժամանակ ընդհատել բանախոսին:
22.13 Դատական կազմի խորհրդակցությունից և գնահատման թերթիկների լրացումից հետո դատավորներից յուրաքանչյուրը թիմերին տրամադրում է կարճ, կառուցողական բանավոր հետադարձ կապ՝ ներկայացնելով թիմի անդամների ելույթների ուժեղ կողմերը և կատարելագործման ենթակա հարցերը:
22.14 Մասնակիցները Մրցույթին պետք է ներկայանան պատշաճ հագուստով (տղամարդիկ՝ կոստյումով և փողկապով, կանայք՝ վերնաշապիկ կամ պաշտոնական զգեստ): Սույն կանոնը խախտելու համար թիմը կտուգանվի 3 միավորի չափով:

23. Բանավոր փուլի միավորների գնահատման և հաշվարկման կարգը
23.1 Բանավոր փուլում յուրաքանչյուր դատավոր ինքնուրույն և մյուս դատավորներից անկախ գնահատում է թիմի և առանձին՝ յուրաքանչյուր բանախոսի ելույթը:
23.2 Յուրաքանչյուր թիմի վերջնական միավորները հաշվարկվում են դատավորների կողմից տրված միավորների հանրագումարի հիման վրա: Թիմի՝ տվյալ մրցափուլի համար ստացած վերջնական միավորը ձևավորվում է մրցափուլի երեք դատավորների կողմից թիմին տրված միավորների հանրագումարից և կարող է կազմել առավելագույնը 300 միավոր:
23.3 Բանավոր փուլի ընթացքում, բացի թիմի գնահատականից, յուրաքանչյուր դատավոր պարտավոր է գնահատել թիմի բանախոսներից յուրաքանչյուրին՝ **10 բալանոց համակարգով,** որի ընդհանուր հանրագումարով կորոշվի Մրցույթի լավագույն բանախոս(ներ)ը:
23.4 Բանավոր նախընտրական փուլի երկու մրցափուլի արդյունքում ստացված միավորների հանրագումարից կկազմվի թիմի՝ բանավոր նախընտրական փուլի վերջնական միավորը:
23.5 Յուրաքանչյուր թիմ մրցույթի յուրաքանչյուր փուլում ստանալու է միավորներ: Նախընտրական փուլերի ստացված միավորները անընդմեջ գումարվում են, իսկ Կիսաեզրափակչում՝ զրոյացվում:

23.6 Բանավոր փուլում **յուրաքանչյուր դատավոր** գնահատում է թիմի ելույթը **100 բալանոց համակարգով՝ հետևյալ չափանիշների հիման վրա՝**

1) Թիմի կազմակերպվածություն և պատրաստվածություն՝ 10 միավոր,
2) Փաստական հանգամանքների և կիրառելի իրավունքի իմացություն և համադրում՝ 30 միավոր,
3) Իրավական հետազոտության խորություն և օգտագործված աղբյուրներ՝ 20 միավոր,
4) Պատշաճ իրավական վերլուծություն՝ 20 միավոր,
5) Հռետորական հմտություններ, հարցերին պատասխանելու կարողություն՝ 10 միավոր,
6) Իրավաբանական ոճ, լեզվական գրագիտություն և մասնագիտական ձևակերպումներ՝ 10 միավոր:

24. Մրցույթի արդյունքների հրապարակումը

24.1 Մրցույթի նախընտրական փուլի ավարտին թիմերին հաղորդվում է վաստակած միավորները: Վերջնական արդյունքները հրապարակվում են եզրափակիչ փուլի ավարտից հետո: Յուրաքանչյուր թիմ իրավունք կունենա ծանոթանալու իր գնահատման թերթիկին Մրցույթի ավարտին:

24.2 Եզրափակիչ փուլում դատավորները կազմում են հակիրճ դատական ակտ, որը մրցույթի ավարտից 30 օրվա ընթացքում կտեղադրվի կայքում:

25. Մրցափուլը գնահատող դատավորները

25.1 Մասնակիցները նախօրոք ծանուցվում են իրենց մասնակցությամբ բանավոր մրցափուլը գնահատող դատական նիստի 3 (երեք) դատավորների կազմի վերաբերյալ:

25.2 Դատական նիստի 3 (երեք) դատավորներին կընտրի Կազմակերպիչը:

25.3 Յուրաքանչյուր դեպքում Կազմակերպիչը իրավունք ունի փոփոխելու ընտրված դատավորին՝ դատավորի չներկայանալու, ուշանալու կամ այլ պատճառներով, որոնք խոչընդոտում են դատավորի մասնակցությանը նիստին:

26. Երրորդ անձանց ներկայությունը մրցափուլերին

26.1 Թիմի շահերը ներկայացնող կամ թիմի շահերով հետաքրքրված երրորդ անձինք (թիմի մարզիչը, թիմի անդամի ընկերներ, բարեկամներ) կարող են ներկա գտնվել **միայն այն մրցափուլին, որին մասնակցում է տվյալ թիմը,** պայմանով, որ կազմակերպչական թիմի անդամները տեղյակ են և թույլատրել են, որ տվյալ անձը (անձինք) ներկա լինի: Թիմը ներկայացնող երրորդ անձինք պարտավոր են պահպանել լռություն և չխոչընդոտել նիստի բնականոն ընթացքին: Երրորդ անձանց ներկայության դեպքում՝ վերջիններիս և թիմի անդամների միջև շփումը, ինչպես նաև երրորդ անձանց կողմից մեկնաբանություններ և բացականչություններ անելը նիստի ընթացքում արգելվում է:

26.2 Դատախաղի կազմակերպչական թիմի անդամները իրավունք ունեն նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող անձին (անձանց) դուրս հրավիրել նիստի դահլիճից և չթույլատրել ներկա գտնվել հաջորդող նիստերին:
26.3 Ցանկացած այլ երրորդ անձանց մուտքը նիստին արգելվում է առանց դատարանի թույլտվության, բացառությամբ եզրափակիչ փուլի, որի մուտքն ազատ է:

27. Էլեկտրոնային սարքերի և արհեստական բանականության գործիքների կիրառումը բանավոր փուլում

27.1 Մրցույթի բանավոր փուլի նիստերի ընթացքում մասնակիցների կողմից լուսանկարահանումը, աուդիոձայնագրումը և տեսաձայնագրումը արգելվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրականացվում են կազմակերպիչների կողմից կամ նրանց նախնական թույլտվությամբ:
27.2 Բանավոր փուլի ընթացքում մասնակիցներին արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից, խելացի ժամացույցներից, պլանշետներից և հաղորդակցություն ապահովող այլ էլեկտրոնային սարքերից:
27.3 Համակարգչի օգտագործումը թույլատրվում է բացառապես նախապես պատրաստված ելույթի նյութերին, գրավոր նշումներին և իրավական աղբյուրներին հասանելիություն ստանալու նպատակով:
27.4 Մրցափուլի ընթացքում բոլոր չօգտագործվող էլեկտրոնային սարքերը պետք է լինեն անջատված կամ անձայն ռեժիմում և պահվեն այնպես, որ դրանց օգտագործումը հնարավոր չլինի առանց դատական կազմի կամ կազմակերպիչների համար տեսանելի լինելու:
27.5 Բանավոր փուլի ամբողջ ընթացքում խստիվ արգելվում է արհեստական բանականության համակարգերի (AI), գեներատիվ արհեստական բանականության գործիքների, ինչպես նաև համարժեք գործառույթներ իրականացնող առցանց կամ ներբեռնված ծրագրերի օգտագործումը՝ անկախ օգտագործման նպատակից, ձևից կամ ծավալից: Մասնավորապես, արգելվում է նշված գործիքների միջոցով՝ իրական ժամանակում պատասխաններ, փաստարկներ կամ հակափաստարկներ ստանալը, դատական կազմի հարցերի պատասխաններ ձևակերպելը, իրավական աղբյուրներ որոնելը կամ վերլուծելը, ելույթի բովանդակությունը խմբագրելը, լրացնելը կամ վերակազմակերպելը, հակառակ կողմի ելույթը մշակելը կամ ամփոփելը:
27.6 Սույն հոդվածով սահմանված արգելքի խախտումը համարվում է մրցույթի կանոնների կոպիտ խախտում և հանգեցնում է թիմի անհապաղ որակազրկմանը:
27.7 Խախտման առկայության վերաբերյալ որոշումն ընդունում է կազմակերպիչը՝ լսելով համապատասխան մասնակցի կամ թիմի պարզաբանումները և գնահատելով առկա հանգամանքները:

28. Կարգապահություն

28.1 Մրցույթի ընդմիջումների ընթացքում (նիստերից դուրս) դատական գործի քննարկումը Մրցույթի դատավորների հետ արգելվում է:

29. Շահերի բախումը

29.1 Բանավոր փուլի ընթացքում Դատավորը չի կարող գնահատել թիմի ելույթը, եթե՝

1) մասնակցել է տվյալ թիմի նախապատրաստմանը,
2) թիմի մասնակցի մերձավոր ազգականն է,
3) առկա է որևէ այլ հանգամանք, որը կարող է հիմնավոր կասկած առաջացնել նրա անաչառության վերաբերյալ:

29.2 Դատավորը պարտավոր է հնարավոր շահերի բախման մասին անհապաղ տեղեկացնել Կազմակերպչին մրցափուլի մեկնարկից առաջ:

29.3 Դատախաղի ավարտից հետո շահերի բախման վերաբերյալ առարկություն կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ համապատասխան հանգամանքը թիմին ավելի վաղ հայտնի չէր և չէր կարող հայտնի լինել:

V. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

30. Մրցույթի անվանակարգեր և մրցանակներ

30.1 Մրցույթում նախատեսված են հետևյալ անվանակարգերը.

1) **«Մրցույթի հաղթող թիմ» (1-ին տեղ)**
2) **«Եզրափակիչ փուլի մասնակից թիմ» (2-րդ տեղ)**
3) **«Լավագույն գրավոր աշխատանք»**
4) **«Լավագույն բանախոս»**

30.2 «Լավագույն բանախոս» կոչումն ու մրցանակը շնորհվում է բանավոր փուլի **կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերում** առավելագույն միավոր ստացած բանախոս(ներ)ին:

30.3 «Լավագույն գրավոր աշխատանք» անվանակարգում մրցանակ շնորհվում է Մրցույթի գրավոր փուլում ներկայացված այն գրավոր աշխատանքի համար (Հայցվորի կամ Պատասխանողի դիրքորոշում), որը դատավորների տված միավորների հանրագումարով ստացել է առավելագույն միավորներ:

31. Կանոնները, դրանց փոփոխությունները և լրացումները

31.1 Կազմակերպիչը կարող է փոփոխել Կանոնները կամ սահմանել լրացուցիչ կանոններ՝ Մրցույթի սահուն ընթացքն ապահովելու նկատառումով: Փոփոխությունների դեպքում մասնակիցները լրացուցիչ կտեղեկացվեն:

31.2 Կանոնների փոփոխությունները և լրացումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ անհրաժեշտության վրա, հավասարապես կիրառվեն բոլոր թիմերի նկատմամբ, չխախտեն թիմերի միջև արդար և հավասար մրցակցության պայմանները:
31.3 Մրցույթի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար մասնակիցները կարող են այցելել կայքէջ, կամ կապ հաստատել Կազմակերպչի հետ:

32. Մրցույթի փաստաթղթերի նկատմամբ իրավունքները
32.1 Կազմակերպչին ներկայացված բոլոր գրավոր աշխատանքները կարող են առանց որևէ սահմանափակման օգտագործվել Կազմակերպչի կողմից գիտական և կրթական նպատակներով մրցույթի վերջնական արդյունքները հրապարակումից հետո:

33. Մրցույթի կանոնների հետ համաձայնվելը
33.1 Մրցույթի յուրաքանչյուր մասնակից պարտավոր է (թիմի անդամ, թիմի ղեկավար և այլն) ծանոթանալ Մրցույթի բոլոր կանոններին, իսկ հարցերի դեպքում՝ դիմել մրցույթի Կազմակերպչին: Յուրաքանչյուր մասնակից կրում է Մրցույթի Կանոններին լիարժեք չտիրապետելու հետ կապված բոլոր հետևանքները: Մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելը և Մրցույթին մասնակցելը համարվում է համաձայնություն Մրցույթի բոլոր կանոնների հետ:

34. Ժամկետներ
34.1 Մրցույթի մասնակցության ժամկետների պահպանումը հանդիսանում է Մրցույթի էական պայման:
34.2 Մրցույթի ժամկետների փոփոխությունների վերաբերյալ կողմերը կտեղեկացվեն թիմի ավագի էլ. փոստի միջոցով:

35. Կազմակերպչի հետ կապը
35.1 Մրցույթի վերաբերյալ հարցերը կարող եք ուղղել **studentmoot@prosecutor.am** էլ. փոստին կամ զանգահարել 095 119424 հեռախոսահամարով:

Հավելված
Բանավոր փուլի մրցափուլի ընթացակարգի աղյուսակը